Իսկ մենք մեր կողմից խոստանում ենք, որքան հնար է, յաճախ քաղուածք անել „Journal d'Orient“ լրագրից և ծանօթացնել „Մշակի“ ընթերցողներին նրա մէջ բովանդակած յօդուածների հետ հայոց խնդրի վերաբերութեամբ։

Բոլոր նուիրատուութիւնները որ կը ստանանք „Journal d'Orient“ լրագրի անունով, կուղարկենք կամ Ներսէս պատրիարքին, կամ նոյն իսկ Վիէննայի Ֆրանսիական լրագրի պ. խմբագրին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՑ

—

Օգոստոսի 15-ին

Զի լինի չը խօսել և այստեղի կանանց վրա, որոնք թողնելով ընտանեկան հոգսերն ու գործերը, տունն ու տեղը, մարդն ու որդիքը, գիշերները թափառում են անից՝ տուն և մնում են այնտեղ մինչև գիշերվայ ժամի երկուսը և երբեմն մինչև լոյսը։ Ինչ են չինում նրանք այնտեղ։ Լօտօ են խաղում, որ այնպէս սաստկացել է այդ անտը սրանց մէջ և այնպէս վարակված են այդ ցաւով, որ եթէ ամեն օր չը խաղան, չեն կարող հանգստանալ։ Բաւական չէ որ սրանք հեռացած լինելով իրանց տնից տանում են տալիս իրանց մարդոց կոպէկներով ժողոված փողերը, բաւական չէ որ մի քանի կանայք ընկերներ լինելով սուտ են տանում և խաբում միամիտներին, սրանով չը բաւականանալով ինչպիսի հայհոյանք, անէծք, անպատիւ և ցածր խօսքեր թափում են բերաններից։ Մէկին անպատուում են հասարակութեան առաջ, միւսի երեսին են խփում նրա պակասութիւնները, երրորդին արգելում են խաղալ և այլն։ Այս բանը պատահում են այն ժամանակ, երբ վերև յիշված ընկերներից մէկը սուա է տանում և միւսները սատանութիւն են պահանջում։ Սատանութիւն ասած բան չը կայ սրանց մէջ. եթէ մէկը հաանգաւոր սատկել ընկերներից մէկի տարածը, իսկոյն նա կը ներվի անպատիւ խօսքերով։ Սա դեռ քիչ է։ Դուռ պէտք է տեսնէք հաշի ժամանակ, թէ ինչպէս են կուռում, ինչպէս են հայհոյում միմեանց։ Երբեմն խաղն ու հաշիւը ձեռով է վերջանում։ Ահա մեր կանայքը, ահա մեր մայրերը, ահա մեր դաստիարակուհիները։ Երբ որ սրանք ընտանիքի վրա խորթ ազգով են նայում և ընկած են այսպիսի դատարկ բաների ետևից. թուչ կը լինեն սրանց կրթած որդիքը։ Սրանց վրա ազգը ինչ յոյս պէտք է ունենայ, և ինչպիսի անդամներ պէտք է սպասի սրանցից։

Այստեղի կանանցից չատերը տեսնելով, որ ամեն օր հրաւէրքը անկարելի բան է, ծախսը չատ է գնում, մի բան հնարեցին, այն է լօտօ-բէյա, որը ինչպէս և լօտօն չատ առաջ է գընացած և ամեն փողոցում լօտոբէյա կը տեսնէք։ Դուրս են բերում տանից ոսկեղէն, արծաթեղէն և կամ մօդայից անցած չորեղէն և մի թերթ թուղթ և անից տուն ման են գալիս և զօռով ստորագրել են տալիս ամենքին, իսկ եթէ մէկը չը ստորագրից, իսկոյն կամաչացնին նրան և մը-լատ կանուանեն։ Այն արծաթեղէնը կամ ոսկեղէնը, որ չարժէ 10 բուբլ, հանում են նրանից 30—40 բ., ուրեմն մնացած 20—30 բ. գործ են դնում ծախսի համար։ Վիճակախաղից յետոյ ըստ կոսում են լօտոյ, իրանց սովորական աղաղակներով։

Մարդիկն էլ յետ չեն մնում խաղերից և հետեւում են իրանց կանանց. սրանք էլ իրանց հերթով թուղթ և նարդի են խաղում, մանաւանդ նարդին, որ այնպէս է տարածված սրանց մէջ, ինչպէս լօտոն կանանց մէջ։ Հաւաքվում են միջին փողոցի վերին մասում և այնտեղ խաղարդի են խաղում և կամ դատարկ խօսակցութիւններով պարապում։ Սրանք հաւաքվելով այստեղի խանութների առաջ, խանութներին չատ վնաս են տալիս, որովհետև առնողներից քչերը գնում և առնում են այն խանութներից, որտեղ սրանք են հաւաքված։

Գօրեցիները, ինչպէս մարդիկ, այնպէս էլ կանայք, զոված են բամբասանքի, զրպարտութեան, սատիսօսութեան, ատելութեան, նախանձի և խորամանկութեան մէջ։ Կանայքը գործ են դնում այս արհեստները լօտո խաղալու ժամանակ, եկեղեցում և իրանց տան դրանը, որտեղ ամեն երեկոյ հաւաքվում են կանայք, իսկ մարդիկը վերև յիշված վայրերում։ Այստեղ չատերը պարապ են, անգործ են և ի հարկէ պարզ։ Հարկաւոր է նախ և առաջ ժողովրդի կեանքը հետազօտել, նրան ուսումնասիրել և ապա նրա անհրաժեշտ պահանջման համեմատ գործել, մտցնել ազգի մէջ այս կամ այն ուղղութիւնը, նայելով թէ որը այդ ուղղութիւններից աւելի յարմար, աւելի համապատասխան է ժողովրդի կենսական պահանջներին։— (խօսքը ուսումն և արհեստ ասողների ուղղութեան վրա է)։ Եթէ հայերը հաւատային պարոն Ա. Ա-ի խօսքերին, անչուշտ պէտք է եկող սեպտեմբերից փակէին իրանց հայ դպրոցները և ուղարկէին իրանց որդիքը կամ արքունի և կամ թէ մասաւոր դպրոցները։ Այդպես անելուց յետոյ՝ մի կարծէք որ փոխարէնը բաց կանէին արհեստագիտական դպրոցներ՝ որովհետև որ տեղից պէտք է բերել տային կիրթ և ուսումնական վարպետներ, այսպիսիները մեր ազգի մէջ չունենք. օտար ազգերից էլ բերել տալու համար մեծամեծ գումարներ են հարկաւոր։

Մեզ հարկաւոր են այս, և ուսումն և արհեստ. բայց արհեստ սորվեցնելու համար չը պէտք է աշխատեք ատելի կացուցանել այն հիմնարկութիւնները, որոնց նպատակն է ժողովրդի մի ջիղ դասակարգի որդոց՝ որոնք «աւոնութեան և իրաւունքի» ետևից չեն ընկած, տալ այնպիսի տեղեկութիւններ, որպիսիները հարկաւոր են հայ քրիստոնեայ վաճառականին, արհեստաւորին, գիւղացուն և քաղաքացուն. որպէս զի դրանք կարողանան օգտվել լրագրութեան և գրականութեան բարիքներից և այդպիսով յառաջ գնան օրըստօրէ և չը մնան անդրագէտ՝ ինչպէս մեր դրացի քրդերն ու թիւրքերն են։

Հաւատացէք պ. Ա. Ա., որ եթէ մեր դպրոցները չը լինէին, մենք այժմ հայ լեզուով լրագրութիւն, գրականութիւն, թատրոն, հասարակական դասախօսութիւններ էլ չենք ունենալու։ Ցեռ նպատեցէք և տեսնէք թէ 20—25 տարիներ առաջ ինչ էինք։ Որքան և փոքր լինեն հայ ուսումնարանների մեզ տուած օգուտները, այնուամենայնիւ՝ այդ փոքրը մեր նկատմամբ աւելի սեռ է, քան թէ այն մեծամեծ օգուտները, որ ստացել են մերոնցից չատ-չատերը՝ «իրաւունքն ու արտօնութիւնը» մայրենի լեզուից վեր դասելով։

«Մշակին» որքան թանդ է նստել արդեօք ապացուցանելու որ ազգային կենդանութեան էական պայմաններից առաջինը մայրենի լեզուն է. եթէ մենք Ներսիսեան դպրոցի և Լ.Ջմ. ճեմարանի մատուցած ծառայութիւնը «տեղ» համարենք՝ մայրենի լեզուի զարգացման և տարածման նկատմամբ, այն ժամանակ, բոլորովին աւելորդ պէտք է համարինք մեր միւս դպրոցների գոյութիւնն իսկ. ապա կը ցանկայի իմանալ թէ պ. Ա. Ա. որ ազգի դպրոցում, կամ որ ազգի լեզուով հայութեան ոգի կը ներշնչէր հայ մանկան սրտի մէջ. և եթէ այդ ոգին չը ներշնչվի մեր հայ պատանիների սրտերի մէջ, ինչով կերաշխաւորէք դուք, պ. Ա. Ա., հայի գոյութիւնը՝ ազգութիւնների պաշտպանութեան, գաղափարական պատերազմի հրապարակում։

Դուք խորհուրդ կը տալիս հայերին որ բաց աչքով իրանց որդիքը չուղարկեն հայ դպրոցները, չուղարկողներին և առհասարակ դէպի հայ դպրոցներն անտարբեր եղողներին արդարացնելով։ Ասացէք խնդրեմ. արքունի տարրական, գաւառական, քաղաքային, մի, երկու. և երեք դասարանաւոր դպրոցները, նոյն իսկ պրոգիմնազիաները՝ (թէ կուզ հէնց գիմնազիաներն էլ, եթէ այդ տեղից աւարտողները, հանգամանքների բերմամբ, բարձրագոյն դպրոցները չը յաճախէին) հարցնում եմ, այդ դպրոցները ինչ արտօնութիւններ և իրաւունքներ են տալիս իրանց աշակերտներին, որպէսզի չը կարողանային ձեռք բերել դոցա համապատասխանող հայ դպրոցների աշակերտները։ Եթէ դուք ակնարկում եք արքունի ծառայութեան մէջ մտնելու իրաւունքն ու արտօնութիւնը, մենք նախ և առաջ աւելորդ ենք համարում մտնողների համար, տնտեսական կէսից նայելով. երբոր մենք մի և նոյն իրաւունքները մեր թեմական դրոցներներն էլ են տուել մինչև ցայսօր. երբոր՝ եթէ դուք հացով կուշտ փորը գերադասում էք վերացական ուսումից և հայի փրկութիւնը սղոց ու մաշառ գործածելու մէջ էք որոնում, ապա ինչու չէք հայերին խորհուրդ տալիս գնալ արքունի և մասնաւոր անձերի արհեստագիտական դպրոցները, քան թէ մի արհեստ չը սորվեցնող դպրոցից հանում էք հայ մանուկին և դնում մի այլ դպրոցում, որտեղ նոյնպէս արհեստ չեն սորվեցնում։

Արքունի դպրոցներում հայ լեզուն դաս է արվում մինչև 4-դ դասարանը։ Ա. Բ. դասարաններում լեզուի համար նշանակած է երկու երկու. դաս շաբաթական, Գ. և Դ. դասարաններում, մի—մի դաս. այդ բոլորն էլ, սովորաբար, ամենավերջին դասերն են լինում։ Մի դասատուից միւսն անցնելու համար աշակերտը եթէ «ընդունակ» էլ ստացած լինի տարեկան նշանակը (բալը). նա բոլորովին խաղալ սրտով կարող է փոխվել և աւարտել իսկ Դ-պէս և և հայոց կրօնի դասը և պահանջը, իսկ հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն և հայոց գրականութիւն խօ բոլորովին դաս չէն տրվում ոչ մի արքունի դպրոցում։ Այս հանգամանքը խօ դուք էլ լաւ գիտէք պ. Ա. Ա., էլ ինչպէս և ինչ խորհրդով էք այն մի քանի հայ դպրոցների վարկն էլ կոտրում ժողովրդի առջև, որոնք արքունի դպրոցների այդ ուղղութեան վնասաբեր հետևանքից մեզ փոքր ինչ հեռու տանելու համար են կոչված, որոնք, այնու ամենայնիւ, հարուստ արտօնաւոր հայերի համար չեն, այլ այն հայերի՝ որոնք իրանց որդոցը ոչ բարձրագոյն և ոչ էլ արքունի մէջեկարգ դպրոցներն ուղարկելու կարութիւն ունեն։ Մի այլ անգամ կասեմ թէ ինչն է հայերին քաշում դէպի արքունի դպրոցները։

Ս. Բէգ-Նազարեանց

Հարցնում եմ այժմ. ցանկալի է որ մեր հ. դպրոցներն ու դպրանոցներն իշեղենք, հաւատարինք պրոգիմնազիանի I դասարանին։

«Մշակի» առաջնորդող յօդուածը. Ա. Ա. ստորագրութիւնով, հաւատացնում է մեզ որ «Ներսիսեան դպրոցի աւարտող աշակերտը» չէ կարող գիմնազիայի «երկու դասարանը մտնել։ Փոքր ինչ ներքևում ասում է «որ Նրանք հաղիւ 4-րդ դասատան (գիմնազիայի) ուսմանն են հասնում»։ Լ.Ջմ.ի ճեմարանի մասին ես լաւ կարծիք չունի պարոն Ա. Ա.։ Դա կարծում է որ «գիմնազիանի բարձր դասատանց աշակերտները մեր պրոֆեսորներին единица կամ нуль կը դնէին։ Մի և նոյն յօդուածի մէջ պարոնն ասում է որ—«հայոց դպրոցները աւարտող աշակերտին ոչ գիտութիւն և ոչ իրաւունքներ են տալիս բարձրագոյն դպրոցներ մտնելու, որպիսին տալիս են Նրանց արքունի դպրոցներն ու մասնաւորները, ուստի «որ հայը», աղաղակում է նա, արքունի և մասնաւոր դպրոցները թողած՝ իր անգին որդու բազը կը յանձնի մի որ և է անստոյգ և թերակատար դպրոցի, ինչպէս են մեր ազգային դպրոցները»։ Մի ուրիշ տեղում, արդարացնելով հայերի անտարբերութիւնը դէպի ազգային դպրոցները, ասում է. «դպրոցը որոշում է մեր որդոց ապագան. ուրեմն ինչպէս կարելի է պահանջել մեզանից, որ նրանք բաց աչքով զրկեն իրանց որդկերանցը իրաւունքներից և գիւրութիւններից, որոնց Նրանք կարողանում են ձեռք բերել րէալական և միւս դպրոցներում». այնուհետև հայերին խորհուրդ է տալիս փոխանակ քերականական վերլուծութեան, իրանց որդոցը սորվեցնեն մաշար, սղոց գործածել և մեծ մարդներ չլինել և իրանց հունձները լաւ պահել գիտենան....

«Մշակի» խմբագրի կարծիքը բարեբաղդաբար այդպէս չէ։ Նա թէև տնտեսականներին ապահովութիւն է քարոզում, բայց նախ՝ նա ի նկատի ունի թիւրքիայի հայերին, որք Ռուսաստանի հայերից նիւթական կողմից չատ աղքատ են, և երկրորդ՝ «Մշակի» 144 №-ի մէջ ասում է կրօրդ մի և նոյն իրաւունքները մեր թեմական դրոցներներն էլ են տուել մինչև ցայսօր. երրորդ՝ եթէ դուք հացով կուշտ փորը գերադասում էք վերացական ուսումից և հայի փրկութիւնը սղոց ու մաշառ գործածելու մէջ էք որոնում, ապա ինչու չէք հայերին խորհուրդ տալիս գնալ արքունի և մասնաւոր անձերի արհեստագիտական դպրոցները, քան թէ մի արհեստ չը սորվեցնող դպրոցից հանում էք հայ մանուկին և դնում մի այլ դպրոցում, որտեղ նոյնպէս արհեստ չեն սորվեցնում։

Արքունի դպրոցներում հայ լեզուն դաս է արվում մինչև 4-դ դասարանը։ Ա. Բ. դասարաններում լեզուի համար նշանակած է երկու երկու. դաս շաբաթական, Գ. և Դ. դասարաններում, մի—մի դաս. այդ բոլորն էլ, սովորաբար, ամենավերջին դասերն են լինում։ Մի դասատուից միւսն անցնելու համար աշակերտը եթէ «ընդունակ» էլ ստացած լինի տարեկան նշանակը (բալը). նա բոլորովին խաղալ սրտով կարող է փոխվել և աւարտել իսկ Դ-պէս և և հայոց կրօնի դասը և պահանջը, իսկ հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն և հայոց գրականութիւն խօ բոլորովին դաս չէն տրվում ոչ մի արքունի դպրոցում։ Այս հանգամանքը խօ դուք էլ լաւ գիտէք պ. Ա. Ա., էլ ինչպէս և ինչ խորհրդով էք այն մի քանի հայ դպրոցների վարկն էլ կոտրում ժողովրդի առջև, որոնք արքունի դպրոցների այդ ուղղութեան վնասաբեր հետևանքից մեզ փոքր ինչ հեռու տանելու համար են կոչված, որոնք, այնու ամենայնիւ, հարուստ արտօնաւոր հայերի համար չեն, այլ այն հայերի՝ որոնք իրանց որդոցը ոչ բարձրագոյն և ոչ էլ արքունի մէջեկարգ դպրոցներն ուղարկելու կարութիւն ունեն։ Մի այլ անգամ կասեմ թէ ինչն է հայերին քաշում դէպի արքունի դպրոցները։